Օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Օրենսգրքի 4-րդ հոդվածով սահմանված՝ «լիազոր մարմին» հասկացությունը սույն բաժնի կիրառության իմաստով ունի հետևյալ նշանակությունը՝ շարժական գույքի կադաստր վարող մարմին՝ Օրենսգրքի 242-րդ հոդվածով սահմանված փոխադրամիջոցների նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցում իրականացնող, այդ փոխադրամիջոցների պետական գրանցում (հաշվառում) վարող՝ կառավարության լիազոր պետական կառավարման համապատասխան մարմին, իսկ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ մասի համաձայն՝ հաշվառող մարմիններ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնք՝ իրականացնում են հարկ վճարողների և փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառումը՝ կառավարության սահմանած կարգով, իրականացնում են փոխադրամիջոցների գույքահարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 242-րդ հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտ են համարվում հետևյալ փոխադրամիջոցները. ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, ջրային փոխադրամիջոցը (շարժիչով աշխատող), մոտոցիկլետը, ձյունագնացը, մոտոամենագնացը (քվադրոցիկլը):

Օրենսգրքի 243-րդ հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ): Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Օրենսգրքի 330-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային և լիազոր մարմինների հսկողության շրջանակներում իրականացվող վարչական վարույթի նկատմամբ կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները, եթե հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված չեն վարչական վարույթի առանձնահատկություններ:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով:

Օրենսգրքի 447-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն՝ մինչև Օրենսգրքի 11-րդ և 12-րդ բաժիններն ուժի մեջ մտնելն ավարտված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ գույքահարկի և հողի հարկի գծով հարկային պարտավորությունները 2021 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում և ենթակա են կատարման մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածով, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 4-րդ, 13-րդ հոդվածներով, ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ, 239-րդ, 240-րդ, 241-րդ, 242-րդ, 243-րդ, 244-րդ, 330-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ, 53-րդ, 58-րդ, 60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ավետիք Խոսրովի Մկրտումյանից «BMW735» մակնիշի 61AA001 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի վճարումները 2012 թվականից մինչև 2020 թվականը չկատարելու արդյունքում հօգուտ Փարաքար համայնքի բյուջեի գանձել 1.384.232 ՀՀ դրամ, որից 908.250 ՀՀ դրամը որպես վճարման ենթակա փոխադրամիջոցի գույքահարկի գումարի ապառք, իսկ 475.982 ՀՀ դրամը որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ: Գումարն անհրաժեշտ է վճարել 900325191022 հաշվեհամարին:

2. Ավետիք Խոսրովի Մկրտումյանից «BMW735» մակնիշի 61AA001 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի վճարումները 2021 թվականից մինչև 2025 թվականը չկատարելու արդյունքում հօգուտ Փարաքար համայնքի բյուջեի գանձել 849.717 ՀՀ դրամ, որից 645.000 ՀՀ դրամը որպես վճարման ենթակա փոխադրամիջոցի գույքահարկի գումարի ապառք, իսկ 204.717 ՀՀ դրամը որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ: Գումարն անհրաժեշտ է վճարել 900325191022 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Փարաքար համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 06
գ. Փարաքար



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հոկտեմբերի 2026 թվականի N 969-Ա

## ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Գանձման պահանջ ներկայացնելու որոշման կարգավորման առարկան.

Անդրանիկ Ազատի Մարգարյանը հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2026 թվականի օգոստոսի 12-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Փարաքարի համայնքապետարանում հարուցվել է վարչական վարույթ անշարժ գույքի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ պարտավորության ծագման պահին գործող «Հողի հարկի» մասին օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 1-ին, 3-րդ, 6-րդ, 12-րդ հոդվածներով և պարտավորության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ 04-094-0048-0036-001, 04-094-0048-0036 կադաստրային ծածկագրերով հողամասերը հանդիսանում են հարկվող օբյեկտ:

«Փարաքար Գյուղապետարան 191 N»: 244834402341110O7 տեղեկանքի համաձայն՝ 04-094-0048-0036-001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի համար որպես հարկ վճարող նշված է Անդրանիկ Ազատի Մարգարյանը: Քաղաքացի Անդրանիկ Ազատի Մարգարյանի կողմից 04-094-0048-0036-001 կադաստրային ծածկագրով հողամասի հարկային վճարումները 2020 թվականին չկատարելու արդյունքում չվճարված գումարը և այն չվճարելու հետևանքով առաջացած ապառքը կազմում է 7.489 ՀՀ դրամ, իսկ հաշվարկված տույժը՝ 2.187 ՀՀ դրամ:

04-094-0048-0036-001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի հարկային վճարումները 2021 թվականից մինչև 2025 թվականը չկատարելու արդյունքում

չվճարված գույքահարկի գումարը և այն չվճարելու հետևանքով առաջացած ապառքը համաձայն՝ «Տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ» 2026 թվականի սեպտեմբերի 22-ի տեղեկանքի՝ կազմում է 117.884 ՀՀ դրամ, իսկ 2021 թվականից մինչև 2025 թվականը հաշվարկված տույժը՝ 39.621 ՀՀ դրամ:

«Փարաքար Գյուղապետարան» 191 N:» 744843423626111134 տեղեկանքի համաձայն՝ 04-094-0048-0036 կադաստրային ծածկագրով հողամասի համար որպես հարկ վճարող նշված է Անդրանիկ Ազատի Մարգարյանը: Քաղաքացի Անդրանիկ Ազատի Մարգարյանի կողմից 04-094-0048-0036 կադաստրային ծածկագրով հողամասի հարկային վճարումները 2020 թվականին չկատարելու արդյունքում չվճարված գումարը և այն չվճարելու հետևանքով առաջացած ապառքը կազմում է 1.372 ՀՀ դրամ, իսկ հաշվարկված տույժը՝ 400 ՀՀ դրամ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Փարաքարի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի օգոստոսի 28-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ: Անդրանիկ Ազատի Մարգարյանը պատշաճ ծանուցված է եղել վարչական լսումների վերաբերյալ, սակայն չի ներկայացել վարչական լսումներին:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասով, 3-րդ հոդվածով՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Հողի հարկի չափը կապված չէ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից և սահմանվում է հողակտորի միավոր մակերեսի համար հաստատագրված վճարի ձևով, որը վճարվում է տարվա համար:

Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հարկման ենթակա մակերեսների մեջ մտնում են՝ շենքերով և շինություններով զբաղեցված հողերը:

Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ հողի հարկի հաշվարկման համար հիմք են հանդիսանում հողի սեփականության, մշտական կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:

Օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձանց հողի հարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ մասի «ա» կետի համաձայն՝ ֆիզիկական անձինք հողի հարկի տարեկան գումարը սույն հոդվածով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում երկու հավասար մասերով, մինչև հաշվետու տարվա նոյեմբերի 15-ը (ներառյալ) և մինչև հաջորդ տարվա ապրիլի 15-ը (ներառյալ): Հողի հարկի գումարը վճարվում է՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 236-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի հարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում ու կարգով հաշվարկված անշարժ գույքի հարկի պարտավորության գումարները) անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են

վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները:

Պարտավորության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է , որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Պարտավորության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում շենքեր և շինություններ, այդ թվում՝ բնակելի նշանակության շինությունները:

Պարտավորության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝ համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Պարտավորության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմիններն ընթացիկ հաշվառման անհրաժեշտ տեղեկություններ են ներկայացնում անշարժ գույքի կադաստր վարող մարմիններ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածով, պարտավորության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» օրենքի 1-ին, 3-րդ, 6-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներով, պարտավորության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ, 4-րդ, 13-րդ հոդվածներով, Հարկային օրենսգրքի 224-րդ, 225-րդ, 226-րդ, 227-րդ, 228-րդ, 401-րդ և 447-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ 58-րդ, 60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Անդրանիկ Ազատի Մարգարյանից 04-094-0048-0036-001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի հարկային վճարումները 2020 թվականին չկատարելու արդյունքում հօգուտ Փարաքար համայնքի բյուջեի գանձել 9.676 ՀՀ դրամ, որից 7.489 ՀՀ դրամը որպես վճարման ենթակա փոխադրամիջոցի գույքահարկի գումարի ապառք, իսկ 2.187 ՀՀ դրամը որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ: Գումարն անհրաժեշտ է վճարել 900325191501 հաշվեհամարին:

2. Անդրանիկ Ազատի Մարգարյանից 04-094-0048-0036-001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի հարկային վճարումները 2021 թվականից մինչև 2025 թվականը չկատարելու արդյունքում հօգուտ Փարաքար համայնքի բյուջեի գանձել 157.505 ՀՀ դրամ, որից 117.884 ՀՀ դրամը որպես վճարման ենթակա փոխադրամիջոցի գույքահարկի գումարի ապառք, իսկ 39.621 ՀՀ դրամը որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ: Գումարն անհրաժեշտ է վճարել 900325005958 հաշվեհամարին:

3. Անդրանիկ Ազատի Մարգարյանից 04-094-0048-0036 կադաստրային ծածկագրով հողամասի հարկային վճարումները 2020 թվականին չկատարելու արդյունքում հօգուտ Փարաքար համայնքի բյուջեի գանձել 1.772 ՀՀ դրամ, որից 1.372 ՀՀ դրամը որպես վճարման ենթակա փոխադրամիջոցի գույքահարկի գումարի ապառք, իսկ 400 ՀՀ դրամը որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ: Գումարն անհրաժեշտ է վճարել 900325191048 հաշվեհամարին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Փարաքար համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

7. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 06
գ. Փարաքար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հոկտեմբերի 2026 թվականի N 970-Ա

## ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Գանձման պահանջ ներկայացնելու որոշման կարգավորման առարկան.

Անդրանիկ Ազատի Մարգարյանը հանդիսանալով փոխադրամիջոցի գույքահարկ վճարող սուբյեկտ, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել փոխադրամիջոցի գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2026 թվականի օգոստոսի 12-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանում հարուցվել է վարչական վարույթ փոխադրամիջոցի գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանում 2026 թվականի օգոստոսի 28-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ: Անդրանիկ Ազատի Մարգարյանը պատշաճ ծանուցված է եղել վարչական լսումների վերաբերյալ, սակայն չի ներկայացել վարչական լսումներին:

«Փարաքար Գյուղապետարան» 191 N: 144843456547111034 տեղեկանքի համաձայն՝ «MERCEDES-BENZ S 320» մակնիշի 66MM061 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցի համար որպես հարկ վճարող նշված է Անդրանիկ Ազատի Մարգարյանը: Քաղաքացի Անդրանիկ Ազատի Մարգարյանի կողմից «MERCEDES-BENZ S 320» մակնիշի 66MM061 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի վճարումները 2017 թվականից մինչև 2020 թվականը չկատարելու արդյունքում չվճարված գույքահարկի գումարը և այն չվճարելու հետևանքով

առաջացած ապառքը կազմում է 227.113 ՀՀ դրամ, իսկ հաշվարկված տույժը՝ 83.395 ՀՀ դրամ:

«MERCEDES-BENZ S 320» մակնիշի 66MM061 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի վճարումները 2021 թվականից մինչև 2025 թվականը չկատարելու արդյունքում չվճարված գույքահարկի գումարը և այն չվճարելու հետևանքով առաջացած ապառքը համաձայն՝ «Տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ» 2026 թվականի սեպտեմբերի 22-ի տեղեկանքի՝ կազմում է 375.750 ՀՀ դրամ, իսկ թվականը հաշվարկված տույժը՝ 127.602 ՀՀ դրամ:

«Փարաքար Գյուղապետարան» 191 N: 144834606911111054 տեղեկանքի համաձայն՝ «MERCEDES-BENZ S 500 4MATIC» մակնիշի 99QQ019 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցի համար որպես հարկ վճարող նշված է Անդրանիկ Ազատի Մարգարյանը: Քաղաքացի Անդրանիկ Ազատի Մարգարյանի կողմից «MERCEDES-BENZ S 500» մակնիշի 99QQ019 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի վճարումները 2019 թվականից մինչև 2020 թվականը չկատարելու արդյունքում չվճարված գույքահարկի գումարը և այն չվճարելու հետևանքով առաջացած ապառքը կազմում է 432.000 ՀՀ դրամ, իսկ հաշվարկված տույժը՝ 136.879 ՀՀ դրամ: «MERCEDES-BENZ S 500 4MATIC» մակնիշի 99QQ019 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի վճարումները 2021 թվականից 2025 թվականը չկատարելու արդյունքում չվճարված գույքահարկի գումարը և այն չվճարելու հետևանքով առաջացած ապառքը համաձայն՝ «Տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ» 2026 թվականի սեպտեմբերի 22-ի տեղեկանքի՝ կազմում է 1.080.000 ՀՀ դրամ, իսկ հաշվարկված տույժը՝ 366.757 ՀՀ դրամ: «MERCEDES-BENZ C 180» մակնիշի 35VX137 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի վճարումները 2019 թվականին չկատարելու արդյունքում չվճարված գույքահարկի գումարը և այն չվճարելու հետևանքով առաջացած ապառքը համաձայն՝ «Փարաքար Գյուղապետարան 191» N: 144837069114114419 2026 թվականի հուլիսի 10-ի տեղեկանքի՝ կազմում է 4.575 ՀՀ դրամ, իսկ հաշվարկված տույժը՝ 1.563 ՀՀ դրամ:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը. ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Պարտավորության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Պարտավորության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում փոխադրամիջոցները, այդ թվում՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, ջրային փոխադրամիջոցը. ձյունագնացը, մոտոամենագնացը (քվադրոցիկլը), մոտոցիկլետը:

Պարտավորության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե

են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝ հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար՝ գույքահարկ վճարող կազմակերպության գտնվելու (հաշվառման) վայրի համայնքի բյուջե: Փոխադրամիջոցի սեփականատեր համարվող ֆիզիկական անձը գույքահարկը վճարում է իր հաշվառման (գրանցման) վայրի համայնքի բյուջե: Նշված հաշվառման (գրանցման) բացակայության դեպքում գույքահարկի գումարը վճարում է իր հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 6-րդ հոդվածի 2-րդ կետի ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝ տեղական հարկեր, որոնց տեսակներն են՝ փոխադրամիջոցների գույքահարկը:

Օրենսգրքի 239-րդ հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի:

Օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Օրենսգրքի 4-րդ հոդվածով սահմանված՝ «լիազոր մարմին» հասկացությունը սույն բաժնի կիրառության իմաստով ունի հետևյալ նշանակությունը՝ շարժական գույքի կադաստր վարող մարմին՝ Օրենսգրքի 242-րդ հոդվածով սահմանված փոխադրամիջոցների նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցում իրականացնող, այդ փոխադրամիջոցների պետական գրանցում (հաշվառում) վարող՝ կառավարության լիազոր պետական կառավարման համապատասխան մարմին, իսկ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ մասի համաձայն՝ հաշվառող մարմիններ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնք՝ իրականացնում են հարկ վճարողների և փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառումը՝ կառավարության սահմանած կարգով, իրականացնում են փոխադրամիջոցների գույքահարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 242-րդ հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտ են համարվում հետևյալ փոխադրամիջոցները. ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, ջրային փոխադրամիջոցը (շարժիչով աշխատող), մոտոցիկլետը, ձյունագնացը, մոտոամենագնացը (քվադրոցիկլը):

Օրենսգրքի 243-րդ հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ): Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Օրենսգրքի 330-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային և լիազոր մարմինների հսկողության շրջանակներում իրականացվող վարչական վարույթի նկատմամբ կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները, եթե հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված չեն վարչական վարույթի առանձնահատկություններ:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով:

Օրենսգրքի 447-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն՝ մինչև Օրենսգրքի 11-րդ և 12-րդ բաժիններն ուժի մեջ մտնելն ավարտված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ գույքահարկի և հողի հարկի գծով հարկային պարտավորությունները 2021 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում և ենթակա են կատարման մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածով, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 4-րդ, 13-րդ հոդվածներով, ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ, 239-րդ, 240-րդ, 241-րդ, 242-րդ, 243-րդ, 244-րդ, 330-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ, 53-րդ, 58-րդ, 60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Անդրանիկ Ազատի Մարգարյանից «MERCEDES-BENZ S 320» մակնիշի 66MM061 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի վճարումները 2017 թվականից մինչև 2020 թվականը չկատարելու արդյունքում հօգուտ Փարաքար համայնքի բյուջեի գանձել 310.508 ՀՀ դրամ, որից 227.113 ՀՀ դրամը որպես վճարման ենթակա փոխադրամիջոցի գույքահարկի գումարի ապառք, իսկ 83.395 ՀՀ դրամը որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ: Գումարն անհրաժեշտ է վճարել 900325191022 հաշվեհամարին:

2. Անդրանիկ Ազատի Մարգարյանից «MERCEDES-BENZ S 320» մակնիշի 66MM061 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի վճարումները 2021 թվականից մինչև 2025 թվականը չկատարելու արդյունքում հօգուտ Փարաքար համայնքի բյուջեի գանձել 503.352 ՀՀ դրամ, որից 375.750 ՀՀ դրամը որպես վճարման ենթակա փոխադրամիջոցի գույքահարկի գումարի ապառք, իսկ 127.602 ՀՀ դրամը որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ: Գումարն անհրաժեշտ է վճարել 900325191022 հաշվեհամարին:

3. Անդրանիկ Ազատի Մարգարյանից «MERCEDES-BENZ S 500» մակնիշի 99QQ019 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի վճարումները 2019 թվականից մինչև 2020 թվականը չկատարելու արդյունքում հօգուտ Փարաքար համայնքի բյուջեի գանձել 568.879 ՀՀ դրամ, որից 432.000 ՀՀ դրամը որպես վճարման ենթակա փոխադրամիջոցի գույքահարկի գումարի ապառք, իսկ 136.879 ՀՀ դրամը որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ: Գումարն անհրաժեշտ է վճարել 900325191022 հաշվեհամարին:

4. Անդրանիկ Ազատի Մարգարյանից «MERCEDES-BENZ S 500» մակնիշի 99QQ019 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի վճարումները 2021 թվականից մինչև 2025 թվականը չկատարելու արդյունքում հօգուտ Փարաքար համայնքի բյուջեի գանձել 1.446.757 ՀՀ դրամ, որից 1.080.000 ՀՀ դրամը որպես

վճարման ենթակա փոխադրամիջոցի գույքահարկի գումարի ապառք, իսկ 366.757 ՀՀ դրամը որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ: Գումարն անհրաժեշտ է վճարել 900325191022 հաշվեհամարին:

5. Անդրանիկ Ազատի Մարգարյանից «MERCEDES-BENZ C 180» մակնիշի 35VX137 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի վճարումները 2019 թվականին չկատարելու արդյունքում հօգուտ Փարաքար համայնքի բյուջեի գանձել 6.138 ՀՀ դրամ, որից 4.575 ՀՀ դրամը որպես վճարման ենթակա փոխադրամիջոցի գույքահարկի գումարի ապառք, իսկ 1.563 ՀՀ դրամը որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ: Գումարն անհրաժեշտ է վճարել 900325191022 հաշվեհամարին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

7.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Փարաքար համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

8. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

9. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 06
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հոկտեմբերի 2026 թվականի N 971-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱՐԱՔԱՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ին ընդունված թիվ 1066-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի հունվարի 25-ի թիվ ՄՈ/28-2021 կարգադրությամբ ստեղծված՝ բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրող հանձնաժողովի 2026 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 20 նիստի եզրակացությունը, հողամասի համասեփականատեր Միքայել Մանուկի Բիսլամյանի և մյուսների 2026 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 5483 դիմումը. **որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղում գտնվող՝ Միքայել Մանուկի Բիսլամյանին, Մանուկ Միքաելի Բիսլամյանին, Կարինե Վասպուրականի Բիսլամյանին և Անի Մանուկի Բիսլամյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող՝ 04-069-0101-0003 կադաստրային ծածկագրով 0.34 հեկտար մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության բարձրարժեք /խաղող/ հողատեսքը փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի:

2.Հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է դիմումատուին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 06
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հոկտեմբերի 2026 թվականի N 972-Ա

## ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՐԴԳԵՍԻ ՋԱՔԱՐԵԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ին ընդունված N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ, հիմք ընդունելով հողամասի սեփականատեր Վարուժան Վարդգեսի Ջաքարեանի 2026 թվականի հուլիսի 28-ի N 4418 դիմումը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի Մ. Մկրտչյան փողոց 17 հասցեում գտնվող Վարուժան Վարդգեսի Ջաքարեանին սեփականության իրավունքով պատկանող՝ /16072026-04-0074 վկայական/ 04-069-0033-0028 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.08523 հեկտար մակերեսով հողամասից՝ 0.008 հեկտարի գործառնական նշանակությունը փոփոխել որպես հասարակական կառուցապատման, նույն հողամասում առկա 60.6 քմ մակերեսով օժանդակ շինության՝ գործառնական նշանակությունը փոխել որպես հասարակական ատամնատեխնիկական նյութերի և պարագաների կենտրոնի, ծածկի, աստիճանի:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն, սույն՝ 0.008 հեկտար մակերեսով հողամասը, հանել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի հաշվեկշռից և ներառել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերի հաշվեկշռում:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Փարաքարի համայնքի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հակոբ Միքաելյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է դիմումատուին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 06
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հոկտեմբերի 2026 թվականի N 973-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ին ընդունված N 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ին ընդունված N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինչպես նաև չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինության զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով հողամասի և շինության հատակագծերը՝ տրված «Ավագ Ավագյան Գագիկի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից, «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2026 թվականի օգոստոսի 20-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2026 թվականի ապրիլի 22-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022R1XIUQ), շինությունը կատարած անձ Զորի Վանուշի Մարգարյանի 2026 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 5547 դիմումը. **որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղում գտնվող՝ 0,00135 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գտնվող՝ 13.5 քառակուսի մետր արտաքին մակերեսով տարածքը ճանաչել Փարաքար համայնքի սեփականությունը և օրինականացնել՝ համաձայն «Ավագ Ավագյան Գագիկի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Հողատարածքին և առկա շինությանը տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Բաղրամյան, Բարեկամության փողոց, 2/1 տարածք (ծածկագիր՝ 04052L72SECV):

3. Հաշվի առնելով, որ կառույցն իրականացվել է Զորի Վանուշի Մարգարյանի կողմից և ընդունվել է առաջարկը՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու հողամասը և շինությունները, Զորի Վանուշի Մարգարյանին ուղղակի վաճառքով օտարել Հայաստանի Հանրապետյան Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի Բարեկամության փողոց, 2/1 հասցեում գտնվող 0.00135 հեկտար մակերեսով հողամասը՝ առկա շինությունով:

4. 13.5 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակելի կառուցապատման հող: Համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

5. Ինքնակամ կառույցի օրինականացման և վաճառքի համար վճարը սահմանվում է յուրաքանչյուր մեկ քառակուսի մետր տարածքի համար 4266 Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ենթակա գումարը կազմում է 57 591 (հիսունյոթ հազար հինգ հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի վարչական եկամուտների 900325003524 հաշվեհամարին:

6. Մեկ քառակուսի մետր հողամասի օտարման վճարը սահմանվում է 1877,7 դրամ, որը 13.5 քառակուսի մետրի համար կկազմի 25 348,95 (քսանհինգ հազար երեք հարյուր քառասունութ Հայաստանի Հանրապետության դրամ իննսունհինգ լումա) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի վարչական եկամուտների 900325164136 հաշվեհամարին:

7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ

2026 թ. հոկտեմբերի 06
գ. Փարաքար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2026 թվականի N 974-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ, 14-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 30.10.2025թ. թիվ 27-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով 2026 թվականի հոկտեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը. ***որոշում եմ՝***

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 22
գ.Փարաքար

Հավելված
Հայաստանի [illegible]
Արմավիր մարզի Փարաքար [illegible]
2026 թվականի հոկտեմբերի 7-[illegible]

*ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ (ՕԱՇԿԱԳԻՐ [illegible])*

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Արմեն Թովմասի Ավչյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ

Սյուզաննա Գևորգի Հակոբյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի բարեվարքության հարցերով կազմակերպիչ

Սեդա Խաչիկի Խաչատրյան

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, առողջապահության, սոցիալական աջակցության և տուրիզմի բաժնի գլխավոր մասնագետ

Լուսինե Յուրիկի Սիմոնյան

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի տեղակալ

Սուրիկ Ռաֆաելի Զաքևոսյան

Փարաքար համայնքի ավագանի

Նաիրա Ռուդոլֆի Սվարյան

Արմավիրի մարզ Փարաքար համայնք գյուղ Մուսալեռ <<Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնք, գ. Փարաքար, Նաիրի 42, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2026 թվականի N 975-Ա

## ՍՈՒՍԱՆՆԱ ՎԱՐԱԶԴԱՏԻ ԲԱՐՈՅԱՆԻՆ, ՆԱՐԵԿ ՎԱՐԱԶԴԱՏԻ ԲԱՐՈՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 21-ի N 631-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Գետափի փողոց տուն 1 հասցեի բնակչուհի Անժելա Վալերիի Մխիթարյանի 2026 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 5561 դիմումը՝ իր անչափահաս երեխաներ՝ Սուսաննա Վարազդատի Բարոյանին, Նարեկ Վարազդատի Բարոյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող << MERSEDES-BENZ C 180 >> մակնիշի (տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր թիվ KE530192) ավտոմեքենան օտարելու վերաբերյալ և Փարաքար համայնքի <<Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի>> 2026 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 12 նիստի 34 արձանագրությունը. ***Որոշում եմ՝***

1. Թույլատրել Անժելա Վալերիի Մխիթարյանին կնքելու իր անչափահաս երեխաներին՝ Սուսաննա Վարազդատի Բարոյանին և Նարեկ Վարազդատի Բարոյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող << MERSEDES-BENZ C 180>> մակնիշի (տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր թիվ KE530192) ավտոմեքենան օտարելու գործարք՝ ի շահ անչափահաս երեխաների:
2. Հսկողություն սահմանել անչափահաս երեխաներ Սուսաննա Վարազդատի Բարոյանի և Նարեկ Վարազդատի Բարոյանի մոր՝ Անժելա Վալերիի Մխիթարյանի գործողությունների նկատմամբ:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Փարաքար համայնքի ղեկավարին՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անժելա Վալերիի Մխիթարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 07
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2026 թվականի N 976-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 19-Ի ԹԻՎ 771-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով. հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված գույքի նկատմամբ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-11092026-04-0249 որոշումը և հողամասի համասեփականատեր Արմեն Վազգենի Առաքելյանի և մյուսների 2026 թվականի սեպտեմբերի 17-ի N 5620 դիմումը. **որոշում եմ՝**


1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 19-ի «Արմեն Վազգենի Առաքելյանի և մյուսների կողմից կատարած ինքնակամ շինությունների օրինականացման մասին» N 771-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝

1) Որոշման նախաբանում «2024DWWMD4» չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրը փոխարինել «20243NDGEX» ծածկագրով:

2 . Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դիմումատուին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 07
գ. Փարաքար



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հոկտեմբերի 2026 թվականի N 977-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 02-Ի ԹԻՎ 951-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից տրված եզրակացությունը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2026 թվականի հոկտեմբերի 2-ի «Հովսեփ Վարդգեսի Մարգարյանի կողմից կատարած ինքնակամ շինությունների օրինականացման և շինությունների գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» N 951-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝

1) Որոշման 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. « 04-030-0034-0012 կադաստրային ծածկագրով հողամասում առկա՝ 24.4 քմ և 30.7 քմ մակերեսներով շինությունների գործառնական նշանակությունները, փոխել որպես՝ հասարակական էսթետիկ բժշկական կլինիկա, 7.3 քմ մակերեսով շինության՝ անասնաշենքի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակելի՝ սանհանգույց:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դիմումատուին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 08
գ. Փարաքար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հոկտեմբերի 2026 թվականի N 978-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հակոբ Միքաելյանի 2026 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 5959 զեկուցագիրը և կից փաստաթղթերը, «Անշարժ գույքի հարկի պարտավորությունների վերաբերյալ» 2026 թվականի հոկտեմբերի 6-ի ամփոփ տեղեկանքը. Որոշում եմ՝

1. Ալլիկ Հովհաննեսի Մկրտումյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով բնակավայրի 04-094-0403-0037 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասում քարե հիմքերով, մետաղական կոնստրուկցիաներով և գազաբլոկներով բնակելի տան կառուցման փաստի առթիվ հարուցել վարչական վարույթ և իրականացնել վարչական լսում 2026 թվականի հոկտեմբերի 27-ին ժամը 15:00-ին ՀՀ, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Փարաքար բնակավայր, Նաիրի փողոց շենք 42 հասցեում, Փարաքարի համայնքապետարանի շենքում:

2. Հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել Ալլիկ Հովհաննեսի Մկրտումյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալլիկ Հովհաննեսի Մկրտումյանին պատշաճ իրազեկելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 08
գ. Փարաքար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
